ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/14» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ (ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 03.04.2020թ.
Ժամը 11^{00}

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝
ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲ վարչության պետի տեղակալ Ա. Մուրադյանը,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲՎ ԿԾԲ գլխավոր մասնագետ Ս. Սարգսյանը,
ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲՎ ԿԾԲ գլխավոր մասնագետ Թ. Ստեփանյանը:

գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ Լ. Թազայանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/14» ծածկագրով գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Լ.Թազայան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակցների մասին.
2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/14» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու և ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Լ.Թազայան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/14» ծածկագրով ԳՀ ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/հ	Մասնակիցների անվանումը
1	«Առսարքտեխ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Լ. Թազայան)

2.1 Մասնակցի էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակցի էլեկտրոնային հայտերում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/14» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) փաստաթղթերն առկա են:

2.3 **«Առսարքտեխ» ՍՊԸ -ի** հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/14» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ ներքոհիշյալի.
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/14» ծածկագրով գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) մասնակցի կողմից ներկայացված հայտը և պարզվել է, որ դրանում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝

Մասնակցի կողմից որպես հայտի ապահովում ներկայացվել է «Առսարքտեխ» ՍՊԸ-ի տնօրենի կողմից հաստատված Ընթացակարգի հրավերով սահմանված *հավելված N3-ը, այնինչ համաձայն Ընթացակարգի հրավերի 7.1 կետի Մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված կարգով, ներկայացնում է հայտի ապահովում՝ բանկային երաշխիքի (հավելված N 3) կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է սույն հրավերով սահմանված առավելագույն գնի հինգ տոկոսին:*

Ընդ որում եթե հայտի ապահովումը ներկայացվում է կանխիկ փողի ձևով, ապա անհրաժեշտ է սահմանված ժամկետում կանխիկ փողի վճարումը հավաստող բնօրինակ փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) ընթեռնելի տարբերակը ուղարկել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարին՝ Լ. Թազայանին, *l.tazayan@mil.am* էլեկտրոնային հասցեով:

Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա անհրաժեշտ է սահմանված ժամկետում /07.03.2020թ. ժ.23:59/ երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը ուղարկել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարին՝ Լ. Թազաանին, *l.tazayan@mil.am* էլեկտրոնային հասցեով, իսկ երաշխիքի բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնել **մինչև 08.03.2020թ.-ը երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:**

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջները՝ **06.04.2020թ.**-ին գնահատող հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը, իսկ գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցեց **«Առսարքտեխ» ՍՊԸ -ին**՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

09.04.2020թ. ին կայացած նիստում գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ **«Առսարքտեխ» ՍՊԸ-ն** սահմանված ժամկետում չէր շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Քանի որ 06.04.2020թ. armeps համակարգի ոչ ավտոմատ ծանուցմամբ ներկայացված շտկման տեքստում ժամանակագրական առումով տեղի էր ունեցել տեխնիկական վրիպակ և 06.04.2020թ. 07.04.2020թ. 08.04.2020թ.-ի փոխարեն նշվել էր՝ 06.03.2020թ. 07.03.2020թ. 08.03.2020թ., ուստի հաշվի առնելով նշված հանգամանքը, հանձնաժողովը որոշեց 09.04.2020թ. դրությամբ մասնակցին ներկայացնել նոր շտկված տեքստով ծանուցում արձանագրված անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ, հետևյալ բովանդակությամբ.

Հարգելի գործընկեր, քանի որ 06.04.2020թ. armeps համակարգի ոչ ավտոմատ ծանուցմամբ ներկայացված շտկման տեքստում ժամանակագրական առումով տեղի էր ունեցել տեխնիկական վրիպակ և 06.04.2020թ. 07.04.2020թ. 08.04.2020թ.-ի փոխարեն նշվել էր՝ 06.03.2020թ. 07.03.2020թ. 08.03.2020թ., ուստի հաշվի առնելով նշված հանգամանքը, խնդրում ենք չքննարկել 06.04.2020թ. ներկայացված շտկման տեքստը և հիմք ընդունել 09.04.2020թ. դրությամբ ներկայացված նոր ծանուցումը արձանագրված անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/14» ծածկագրով գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) Ձեր կողմից ներկայացված հայտը և պարզվել է, որ դրանում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝

Ձեր կողմից որպես հայտի ապահովում ներկայացվել է «Առսարքտեխ» ՍՊԸ-ի տնօրենի կողմից հաստատված Ընթացակարգի հրավերով սահմանված *հավելված N3-ը, այնինչ համաձայն Ընթացակարգի հրավերի 7.1 կետի Մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված կարգով, ներկայացնում է հայտի ապահովում՝ բանկային երաշխիքի (հավելված N 3) կամ կանխիկ փողի ձևով, որի չափը համաչափ է սույն հրավերով սահմանված առավելագույն գնի հինգ տոկոսին:*

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41 րդ կետը՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկում է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունը:

Ընդ որում եթե հայտի ապահովումը ներկայացվում է կանխիկ փողի ձևով, ապա անհրաժեշտ է սահմանված ժամկետում կանխիկ փողի վճարումը հավաստող բնօրինակ փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) ընթեռնելի տարբերակը ուղարկել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարին՝ Լ. Թազայանին, *l.tazayan@mil.am* էլեկտրոնային հասցեով:

Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա անհրաժեշտ է սահմանված ժամկետում /10.04.2020թ. ժ.23:59/ երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը ուղարկել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարին՝ Լ. Թազաանին, *l.tazayan@mil.am* էլեկտրոնային հասցեով, իսկ երաշխիքի բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնել մինչև 13.04.2020թ.-ը **Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:**

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջները՝ **09.04.2020թ.**-ին գնահատող հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը, իսկ գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցեց **«Առսարքտեխ» ՍՊԸ-ին**՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

14.04.2020թ.-ին կայացած նիստում գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ **«Առսարքտեխ» ՍՊԸ-ն** սահմանված ժամկետում չէր շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

2.4 Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի **42**-րդ կետ՝ գնահատող հանձնաժողովը որոշեց **«Առսարքտեխ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված փաստաթղթերը գնահատել հրավերի պահանջներին անբավարար և մերժել վերջինիս հայտը:

2.5 14.04.2020թ.-ին կայացած նիստում, գնահատող հանձնաժողովը որոշեց ընթացակարգը հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

(Լ. Թազայան)

3.1 Գնումների մասին ՀՀ օրենսդրության և սույն ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ է ներկայացրել հետևյալ մասնակիցը՝

Հ/Հ	Գնան առարկայի անվանումը	Չ/մ	Քանակ	Նախահաշվայի գին ՀՀ դրամ	Մասնակիցներ	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	Դիզել գեներատոր (էլեկտրական գեներատոր 10 13 Կվտ)	հատ	10	**15,000,000**	Առսարքտեխ ՍՊԸ	2,844,000	284,400	625,680	3,754,080

3.2 Մասնակցի գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են (ճիշտ են):

3.3 Բանակցություններ չեն վարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

(Լ. Թազայան)

5.1 Մասնակցի կողմից հայտերի վերաբերյալ 06.04.2020թ. կատարվել է հարցում (կցվում է), որին 07.04.2020թ. գնահատող հանձնաժողովի կողմից պատասխանվել է հետևյալ բովանդակությամբ.

Ի պատասխան Ձեր՝ 06.04.2020 թվականին էլեկտրոնային ձևով ներկայացված գրության, հայտնում եմ, որ **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/14»** ծածկագրով գնումն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության համապատասխան: Այս առումով ինչպես պատվիրատուն, այնպես էլ գնումների գործընթացին մասնակցող անձինք պարտավոր են գործել «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության դրույթներին համապատասխան:

Ձեր դիմումում նշված հանգամանքները չեն բխում վերը նշված օրենսդրության պահանջներից և հետևաբար քննարկման ենթակա չեն:

Ելնելով վերոգրյալից և առաջնորդվելով «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ՝ տեղեկացնում եմ Ձեզ, որ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ 20 10/14» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը առաջարկում է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Անհամապատասխանությունը չշտկելու դեպքում գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով Ընկերության տվյալները կուղարկվեն ՀՀ ֆինանսների նախարարություն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:

(Լ.Թազայան)

5.1 **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/14»** ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Ա. Մուրադյան

Գնահատող Ս. Սարգսյան

Գնահատող Թ.Ստեփանյան

Գնումները համակարգող Լ. Թազայան

ԱՌՍԱՐՔՏԵԽ ARCARKTEX

Ք. Երևան, Կ. Ուլնեցու 1 -15
Հեռ. 093-939410, 091-409681

06 ապրիլի 2020թ.
ԱԱ - 05 /20

«ՀՀ ՊՆ ՆՏԱԳ-ԳՀԱՊՁԲ-20-10/14»
ծածկագրով ընթացակարգի
գնահատող հանձնաժողովին

Հարգելի հանձնաժողով

Ի պատասխան Ձեր սույն թվականի ապրիլի 06-ի գրության, հայտնում եմ, որ հանրապետությունում հայտարարված արտակարգ դրության հետ կապված, արդեն մոտ երկու շաբաթ է մեր կազմակերպությունն աշխատում է հեռահար եղանակով՝ տանից, ինչի արդյունքում աշխատակիցների շփման ընթացքում տեղի է ունեցել թյուրըմբռնում, և ոչ դիտավորյալ կերպով նշված ապրանքի տասը միավորի գնի փոխարեն գնառաջարկում նշվել է ընդամենը մեկ միավորի գինը: Ասվածի վկայությունն է նաև շուկայական գներն ու Ձեր կողմից տվյալ գնման համար նախատեսված գումարը: Ընդունելով մեղքի մեր բաժինը՝ խնդրում եմ հնարավորինս մեղմ գտնվել, և մեկ տեխնիկական վրիպակի պատճառով աշխատող, պետությանը հարկ վճարող, բարի համբավ ունեցող կազմակերպությանը, սոցիալ-տնտեսական այս բարդ իրավիճակում, չզրկել գործունեություն ծավալելու հնարավորությունից:

Հուսով եմ ըմբռնումով կմոտենաք, ինչի համար շնորհակալ եմ:

Տնօրեն *Հ. Պողոսյան*